



ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄՈՒՆԴԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ¹⁾

Շարականները հայ եկեղեցու կրօնական բանաստեղծութուններն են:

Դրանց հավաքածուն նույնպես կոչվում է շարական: Միջին հայերենում անհատ երգը երգերի ամբողջական հավաքածուից զանազանելու համար առաջինները կոչվում էին շարական, իսկ հավաքածուն՝ Շարականոց: Բայց ընդհանրապես այս տարբերությունը նկատի առնված չէ և այժմ երկու խմատով էլ ասվում է շարական:

Շարականները երկու տեսակ են. առաջինը՝ այն երգերը, որոնք հայ եկեղեցին ընդունել է պաշտոնապես և ամեն մի համապատասխան տոնի առթիվ երգվում է. երկրորդ՝ այն երգերը, որոնք թեև այսու այն հեղինակի կողմից կազմված, բայց պաշտոնապես ընդունված չեն եկեղեցուց և չեն երգվում եկեղեցում: Դրանք կոչվում են պարականոն շարականներ: Շարականներն ունեն իրենց եղանակը, և մեր հին ձեռագրերը ամեն անգամ հատուկ խաղերով (նշաններով) նշանակում են այդ եղանակները: Դժբախտաբար այդ խաղերը մեզ անհայտ են. չինքն ոչ մի հին ձեռնարկ, որը սովորեցներ մեզ այդ խաղերի արժեքը, այնպես որ շարականների եղանակները թեև ձայնագրված են, բայց մենք նրանց հին եղանակը չգիտենք: Սկզբունքները ամբողջ ավանդաբար կրկնել ևն միշտ այդ եղանակները և հասցրել ևն մեզ: Բայց թե ի՞նչ հարազատությամբ, այդ Հայտնի չէ: Առաջին անգամ Գեղորդ Դ. կաթողիկոսը ուղեց շարականների հա-

րազատ եղանակը դոնել և ձայնագրել տալ, որպեսզի բոլոր եկեղեցիներում նրա գեցողությունը հաստատուն և միատեսակ լինի: Լինելով պոլսեցի, Պոլսում ճանաչել էր Բաբա Համբարձում կոչված երաժշտագետին, որը սքանչելի շարականագետ էր: Բաբա Համբարձումի աշակերտն էր Նիկողայոս Թաշյանը, որին Գեղորդ կաթողիկոսը հրավիրեց Պոլսից էջմիածին շարականները կարգավորելու: Գեղորդ կաթողիկոսի կարգադրությամբ էջմիածին են հրավիրում հայ բոլոր շարականագետները խորհրդակցելու շարականների կարգավորման և ձայնագրման մասին: Գեղորդ կաթողիկոսն ու Թաշյանը խորհրդակցությունից հետո համեմատեցին լսածները իրենց խափացած շարականների հետ և աշխատելով դոնել հարազատը ձայնագրեցին:

Առաջինը, որ շարականները թեև հին խաղեր ունեն, բայց նրանց նշանակությունը մեզ հայտնի չէ: Թաշյանը խաղերից ընտրեց յոթ հատ, որ կոչեց իո, է, ղե, բե, խո, նե, պա: Դրանք համապատասխանում են եվրոպական ձայնաբանականին: Այսպիսով կազմեցին առաջին յոթնյակը, նրանով ձայնագրեցին ամբողջ շարականը և տվին հրատարակության: Դա մի մեծածախալ և մեծարժեք գործ է, որ տարված է էջմիածնում և կոչվում է «Ձայնագրյալ շարական»: Պարականոն շարականները դանազան ձեռագրերից հավաքելով հրատարակեց Մահակ Վ. Ամատունին (Վաղարշապատ 1941 թ.):

Հանդուցյալ Կոմիտաս վարդապետը մասնաց, գտնել ու վերականգնել կորած շարականների հին հարազատ եղանակները, ուրիշ խոսքով գտնել հին խաղերի նշանակությունը: Առաջնորդվելով այն գաղափար:

1) Տպելով այս հոդվածը խմբագրությունը խնդրում է մասնագետներին արտահայտել այս հարցի շուրջը իմ և:

բով, որ ձայնի աստիճանները միայն յոթ են, իսկ հին հայոց խաղերի թիվը մի քանի տասնյակ է, նա մոտածնց, որ հին հայոց խաղերը ներկայացնում են ոչ միայն դիսալոր ձայները, այլև նրանց մի մասն էլ ներկայացնում է մի քանի ձայների գումարը: Ուրիշ խոսքով ինչպես հայերն տառերի գոյության մեջ ունենք և մն և փակագրեր (երկու տառերի միացումներ), այսպես էլ խաղերի մեջ: Իբրև հիմք ընդունելով արդի եղանակները և առաջնորդվելով փակագիր կամ բաղադրյալ խաղերի դադափարով, նա վերականգնեց շարականների հին եղանակը: Այս դործի վրա հոմիտասը աշխատեց շատ երկար տարիներ և կազմեց մի մեծ աշխատություն, որ չկարողացավ հրատարակություն տալ:

Շարականների մասին կան բազմաթիվ լուրջ աշխատություններ, որոնցից դիսալորն է Ավետիքյանի «Բացատրություն շարականաց»-ը, (տպ. Վենետիկ): «Արարատ»-ի մեջ ընդարձակ ուսումնասիրություն ունեն Սահակ վարդ. Ամատունին, հանգուցյալ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը:

շարականների մասին գրել է նաև Ներսես վարդապետ Տեր Միքայելյանը (դերմաներեն լեզվով): Ուսումնասիրությունների մեջ ոմանք շարականների սկիզբը դնում են հինդերորդ դարից, իսկ ոմանք ավելի ուշ: Ընդունված կարծիքը Ծրդ դարն է համարում շարականների հորինման ժամանակը: Հայտնվում է այն միտքը, որ իբր թե շարականների խումբը գտել են Սահակ Պարթևը («Պարզապատու ամենեցուն») և Մեսրոպ Մաշտոցը («Ծով կենցաղոյս»): Ուրիշները, սակայն հաստատում են, որ շարականներն ավելի ուշ են հորինված, սկսած ութերորդ դարից և ավելի հետո: Այս կարծիքին են ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը և Ներսես վարդապետը իրենց վերահիշյալ ուսումնասիրությունների մեջ՝ հիմնվելով պատմական և կրոնական հիմունքների վրա: Այս կարծիքին է նաև ակադեմիկոս Հ. Աճառյանը, որն իր կարծիքը հիմնում է շարականների ոչ ոսկերչարյան լեզվի վրա:

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ

